ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 01-Ա

«19 », հունվարի – 2021 թ. թիվ 1 արտահերթ նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (4 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | --------------------- | --------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | --------------------- | --------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | --------------------- | --------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | --------------------- | --------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021 թվականի հունվարի «19»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 ⁰⁰

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 19-ի թիվ 1 արտահերթ
նիստի N 01-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1) Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 25-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

3) Դրամական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 02-Ն

**«19» հունվարի – 2021թ.** **թիվ 1 արտահերթ նիստ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2112-Ն որոշումը և որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 25-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | --------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | --------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | --------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | --------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ X ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021 թվականի **հունվարի** «19 »
գ. Լուսագյուղ
**Ժամը՝** 11 30

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 19-ի թիվ 02 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ի թիվ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Լուսագյուղ համայնքի 2021 թվականի բյուջեի եկամտային մասում կատարվող լրացումներ և փոփոխություններ

(հազ. դրամ)

| Տողի համարը | Բյուջետային եկամուտների անվանումները | Հատված | Հաստատված | Կատարվող փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները՝ բացասական նշանով) | Ճշտված |
|---|---|---|---|---|---|
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ | հատված 1 | 0 | 2880.9 | 2880.9 |
| 1000 | Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ | հատված 1 | 0 | 2880.9 | 2880.9 |

2.Լուսագյուղ համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսային մասում կատարվող լրացումներ և փոփոխություններ

(հազ. դրամ)

| Տողի համարը | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Հոդված | Հաստատված | Կատարվող փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները՝ բացասական նշանով) | Ճշտված |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2435 | 04 | 3 | 5 | Էլեկտրաէներգիա | 5112 | 0 | 2880.9 | 2880.9 |
| 2435 | 04 | 3 | 5 | Էլեկտրաէներգիա | 4241 | 0 | 200.0 | 200.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ | 4891 | 4032.0 | - 200.0 | 3832.0 |
| 2000 | | | | Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր | | 34032.0 | 0 | 34032.0 |
| 2000 | | | | Ընդամենը ֆոնդային բյուջեի ծախսեր | | 0 | 2880.9 | 2880.9 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22-Ա

«19» հունվարի - 2021թ. թիվ 1 արտահերթ նիստ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի սոցիալապես անապահով բնակչուհի՝ Աննա Քամալյանին հատկացնել դրամական օգնություն՝ 30000 /երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ---------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021 թվականի հունվարի «19»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 $^{00}$